ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով երկու պետությունների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության անհրաժեշտությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համագործակցություն կիրականացնեն հետևյալ ուղղություններով՝

1) իրավաբանական գիտության և պրակտիկայի տարբեր խնդիրներով երկկողմ համաժողովների, խորհրդաժողովների և սեմինարների կազմակերպում,

2) օրենսդրության և իրավական կառույցների մասին տեղեկատվության փոխանակում,

3) միմյանց արդարադատության մարմինների և հիմնարկների կազմակերպման և գործունեության հետ ծանոթանալու համար Կողմերի պատվիրակությունների փոխանակում,

4) իրավաբանական կադրերի պատրաստման, մասնագետների փոխադարձաբար փոխանակման գործում աջակցություն,

5) Կողմերի արդարադատության մարմինների և հիմնարկների միջև գործընկերային կապերի հաստատում,

6) օրինագծերի իրավական փորձաքննության համար հավասարության սկզբունքով մասնագետների խմբերի ստեղծում,

7) արդարադատության ազգային համակարգերի իրազեկման բնագավառի մասնագետների փոխանակման իրականացում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը համատեղ ծրագրերի մշակման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարաբերությունների ոլորտում կարող են ստեղծել օրենսդրության կատարելագործման հանձնաժողովներ:

Հոդված 3

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրությամբ:

Այդ արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի դրույթների իրագործման ընթացքում Կողմերի միջև առաջացող վեճերը և տարաձայնությունները կլուծվեն բանակցությունների և խորհրդատկցությունների միջոցով:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստացվելու օրվանից և գործում է անորոշ ժամանակով:

Սույն Համաձայնագիրը գործողությունը դադարեցնում է Կողմերից մեկի կողմից Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմի գրավոր ծանուցումը ստցվելու օրվանից վեց ամիս անցնելուց հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի մայիսի 23-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը նախապատվություն են տալիս ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 27-ից: